# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, ararataygestan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 24

### ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07.08.2020Թ. ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
2. Այգեստանի համայնքապետարանին պատկանող հողամասից մաս առանձնացնելու մասին:
3. Այգեստան համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 3,2 հա ընդհանուր մակերեսով թվով 11 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին:
4. Այգեստան համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

Համայնքի ղեկավար՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ**
**ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, ararataygestan@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 25

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Լյովա Օնիկի Խաչատրյանի դիմումը

2. Սեփականության իրավունքով Լյովա Օնիկի Խաչատրյանին պատկանող 03-011-0107-0002 կադաստրային ծածկագրով 0.4849 հա գյուղ.նշանակության պտղատու այգու նպատակային նշանակությունը փոփոխել և դասել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությանը,սպանդանոց կառուցելու նպատակով:
3. Հողամասի կադաստրային արժեքների տարբերության վճար սահմանված չէ:
4. Կառուցապատում իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի դեպքում, համայնքի ղեկավարի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված շինարարության թույլտվությունից հետո:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

**Համայնքի ղեկավար՝** **ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ
ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, araratayegestan@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 26

## ԱՅԳԵՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով

Թույլատրել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով Այգեստան համայնքի Շահումյան փող. 16 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող համայնքապետարանի տարածքի հողամասից առանձնացնել 95 մ$^2$ հողամաս:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

**Համայնքի ղեկավար՝** ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, ararataygestan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 27

ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 3,2 ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ, ԹՎՈՎ 11 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այգեստան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Այգեստան համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 3,2 հա ընդհանուր մակերեսով թվով 11 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Այգեստան համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 3,2 հա ընդհանուր մակերեսով թվով 11 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջակությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

**Համայնքի ղեկավար՝** ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Այգեստան, 023560041, araratayqestan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 28

## ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.

Վարչական բյուջեի 11.01.02.51 (վ/բ պահուստային ֆոնդ) ծրագրի 4891 հոդվածից պակասեցնել 935,0 հազ.դրամ և ավելացնել.

1. 06.04.01.52 (արտաքին լուսավորության ցանցի շահագործում) ծրագրի 4239 հոդվածին 132,0 հազ.դրամ
2. 05.01.01.51 (աղբահանություն և սանիտարական մաքրում) ծրագրի 4264 հոդվածին 30,0 հազ.դրամ
3. 01.06.01.60 (գույքի նկատմամբ իրավունքների գրանցում) ծրագրի 4241 հոդվածին 220,0 հազ.դրամ, 4823 հոդվածին՝ 27,0 հազ.դրամ
4. 04.05.01.58 (մայրուղիների և փողոցների վերակառուցում) ծրագրի 4264 հոդվածին 120,0 հազ.դրամ և 4239 հոդվածին՝ 406,0 հազ. դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

Համայնքի ղեկավար՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Առդիր.
ՀՀ Արարատի մարզի Այգեստան համայնքի ավագանու
2020թ. օգոստոսի 7-ի թիվ 27-Ա որոշման

## Այգեստան համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի աճուրդ-վաճառք

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը /հողատեսքը/ | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին /դրամ/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 01 | գ.Այգեստան | 03-011-0064-01 | 3000 | գյուղատնտեսական | վարելահող | | 1344000 | չկան |
| 2 | Լոտ 02 | գ.Այգեստան | 03-011-0064-02 | 3000 | գյուղատնտեսական | վարելահող | | 1344000 | չկան |
| 3 | Լոտ 03 | գ.Այգեստան | 03-011-0064-03 | 3000 | գյուղատնտեսական | վարելահող | | 1344000 | չկան |
| 4 | Լոտ 04 | գ.Այգեստան | 03-011-0064-04 | 3000 | գյուղատնտեսական | վարելահող | | 1344000 | չկան |
| 5 | Լոտ 05 | գ.Այգեստան | 03-011-0064-05 | 3000 | գյուղատնտեսական | վարելահող | | 1344000 | չկան |
| 6 | Լոտ 06 | գ.Այգեստան | 03-011-0064-06 | 3000 | գյուղատնտեսական | վարելահող | | 1344000 | չկան |
| 7 | Լոտ 07 | գ.Այգեստան | 03-011-0064-07 | 3000 | գյուղատնտեսական | վարելահող | | 1344000 | չկան |
| 8 | Լոտ 08 | գ.Այգեստան | 03-011-0064-08 | 3000 | գյուղատնտեսական | վարելահող | | 1344000 | չկան |
| 9 | Լոտ 09 | գ.Այգեստան | 03-011-0064-09 | 3000 | գյուղատնտեսական | վարելահող | | 1344000 | չկան |
| 10 | Լոտ 10 | գ.Այգեստան | 03-011 | 2500 | գյուղատնտեսական | պտ.այգի | | 1280000 | չկան |
| 11 | Լոտ 11 | գ.Այգեստան | 03-011 | 2500 | գյուղատնտեսական | պտ.այգի | | 1280000 | չկան |

*Այգեստանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար* *Լ.Հարությունյան*

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱՅԳԵՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ 04201129